Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում

ԵՄ ֆինանսավորմամբ և ՄԱԱԶԿ-ի աջակցությամբ իրականացվող ծրագիր

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Թիվ 16

2025թ. օգոստոս

Առաջընթացի մեկ ամիսը

2025թ. Օգոստոսին ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (ՄԱԱԶԿ) ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագրի շրջանակում իրականացրեց վերապատրաստման դասընթացների շարք՝ ուղղված Ստանդարտների և չափագիտության ազգային մարմնի (ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ) և Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի տեխնիկական և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը:
Միաժամանակ շարունակվել են «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի իրավական գործընթացները:

Ավարտվել է «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի դիտարկման գործընթացը

«Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծն անցել է Ազգային Ժողովի փորձագիտական և վերլուծական վարչության մասնագիտական փորձաքննություն, ինչպես նաև իրավական, ֆինանսատնտեսական և սոցիալական գնահատում:
2025 թ. հուլիսի 31-ից մինչև օգոստոսի 18-ը օրինագիծը տեղադրվել է նաև e-draft.am հարթակում՝ հանրային քննարկման համար, ինչը կարևոր քայլ է Հայաստանի օրենսդրական դաշտի ամրապնդման ուղղությամբ՝ համահունչ միջազգային և եվրոպական չափանիշներին:

Վառելիքաբաշխիչ աշտարակների տրամաչափարկման և Չափող սարքերի (MID) հրահանքի կիրակման վերաբերյալ դասընթաց

Օգոստոսի 4-8-ը ՄԱԱՁԿ-ն կազմակերպեց գործնական դասընթաց չափող սարքերի (MID) 2014/32/ԵՄ կանոնակարգի, մասնավորապես վառելիքաբաշխիչ աշտարակների տրամաչափարկման վերաբերյալ: Դասընթացին մասնակցեց Ստանդարտների և չափագիտության ազգային մարմնի (ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ) յոթ մասնագետ և Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի երկու ներկայացուցիչ: Չեխիայի չափագիտության ինստիտուտի (CMI) փորձագետների կողմից անցկացված դասընթացը ներառում էր տեսական և գործնական հատվածներ: Անդրադարձ կատարվեց տեխնիկական և չափագիտական պահանջներին, համապատասխանության գնահատման ընթացակարգերին և OIML R117 փաստաթղթի կիրառմանը: Դասընթացը մասնակիցներին տրամադրեց անհրաժեշտ գիտելիքներ և գործիքակազմ՝ օրենսդրական չափագիտության հրահանգների կիրառման, ինչպես նաև եվրոպական իրավական շրջանակին համապատասխանեցման համար:

«Գործնական օրինակները շատ օգտակար էին, իսկ տրամադրված տեղեկությունը՝ չափազանց արժեքավոր: Այն գործնական գիտելիք տվեց Եվրոպայում գործող ընթացակարգերի վերաբերյալ: Շնորհակալություն դասընթացի կազմակերպման և այդքան արդիական թեմա ընտրելու համար. այն շատ օգտակար էր օրենսդրական չափագիտության հրահանգների պահանջները հասկանալու համար»:

Դասընթացի մասնակից

Ներքին աուդիտի վերաբերյալ դասընթաց Ուժի մոմենտի և ճնշման լաբորատորիաների համար

Օգոստոսի 25-29-ը ՄԱԱՁԿ-ն կազմակերպեց ISO/IEC 17025:2017 ստանդարտին համապատասխան ներքին աուդիտ թեմայով վերաբերյալ հնգօրյա գործնական դասընթաց Ստանդարտների և չափագիտության ազգային մարմնի (ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ) ուժի մոմենտի և ճնշման լաբորատորիաների մասնագետների համար: Դասընթացի նպատակն էր ամրապնդել ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի տեխնիկական կարողությունները և նախապատրաստել ուժի մոմենտի և ճնշման լաբորատորիաները միջազգային հավատարմագրման: Գործնական դասընթացի ժամանակ մասնակիցներն իրականացրեցին ուժի մոմենտի և ճնշման տրամաչափարկում, չափման անորոշության գնահատում, ինչպես նաև ճնշման տրամաչափիչ սարքավորումների և օդային ճնշման հավասարակշռիչների կիրառում: Ծրագրի կարևոր մաս էր միջազգային փորձագետի աջակցությամբ իրականացրած սիմուլյացիոն ներքին աուդիտը, որի ընթացքում ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի մասնագետները մշակեցին աուդիտի ծրագրեր, կազմեցին ISO/IEC 17025:2017 ստանդարտին համապատասխան ստուգաթերթեր և փորձարկեցին շեղումների հայտնաբերման ընթացակարգեր: Դասընթացի արդյունքում գնահատվեց լաբորատորիաների միջազգային հավատարմագրման պատրաստվածությունը և ներքին աուդիտի ընթացակարգերի ու որակի կառավարման համակարգերի արդյունավետությունը:

Ծրագրի մասին

«Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագիրն իրականացնում է ՄԱԱԶԿ-ը՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ: Ծրագրի հիմնական նպատակն է զարգացնել ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի կարողությունները՝ շահառուներին միջազգայնորեն ընդունելի չափագիտական ծառայություններ մատուցելու համար: Հայաստանի չափագիտության համակարգի իրավական, կառուցվածքային եւ տեխնիկական կարգավորումների բարելավման միջոցով ծրագիրը նպաստում է համակարգի արդիականացմանը՝ խթանելով տնտեսության դիվերսիֆիկացիան եւ առեւտրի մրցունակության բարձրացումը, ինչը համահունչ է ԵՄ-ի հետ ստորագրված «Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրով» (CEPA) Հայաստանի ստանձնած հանձնառություններին:

Ծանոթագրություն

Ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից: Այս տեղեկագրի բովանդակության պատասխանատուն բացառապես հեղինակներն են եւ այն կարող է չարտահայտել Եվրոպական միության եւ ՄԱԱԶԿ-ի տեսակետները: Այս տեղեկագիրը հրապարակվել է «Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Տեղեկագիրը պատրաստվել է առանց Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական խմբագրման:

Ծրագրի արդյունքները (2025թ. օգոստոս)

ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի և ՇՎՏՄ 15 աշխատակցի վերապատրաստում կարողությունների զարգացման երկու դասընթացի արդյունքում

8,710 դիտում և 4,734 ներգրավվածություն սոցիալական մեդիայի հարթակներում հրապարակումների արդյունքում

746 հետևորդ ծրագրի սոցիալական մեդիայի հարթակներում

Լրացուցիչ տեղեկության համար դիմել՝
Ծրագրի ղեկավար Ցոնգ Վուին, C.WU@unido.org

Նորությունների համար հետևեք մեզ՝

Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից